ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ մշակույթի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հուլիսի 20-ին կնքված «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-3» պայմանագրում 2017 թվականի օգոստոսի 21-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1	Մասնակցի կողմից կանխավճարի տրամադրման դիմում
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրում համապատասխան դրույթների ավելացում
Փոփոխության հիմնավորում	Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հուլիսի 20-ին կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-3» պայմանագրի 8.4 կետը և Կապալառուի կողմից ներկայացված բանկային երաշխիքը՝ Պայմանագրում կատարվել է լրացում և նախատեսվել կանխավճարի տրամադրում:

Պատվիրատու՝ **ՀՀ մշակույթի նախարարություն**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-3» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» օգոստոս 2017 թ.

ՀՀ մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար Ս. Մուրադյանի, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և "ԿՈՏԱՅՔՆԱԽԱԳԻԾ" ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր») կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2017 թվականի հուլիսի 20-ին կնքված պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N «ՀՀՄՆ-ԲԸԱՇՁԲ-17/38-3» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը՝ Պատվիրատուն և Կապալառուն համաձայնության են եկել Պայմանագրում կատարել հետևյալ լրացումը.

1.1.1 Պայմանագրի 5.1-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1.1 ենթակետով.

«5.1.1 Պայմանագրի գնից՝ 2 257 289 (երկու միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր ութսունինը) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար, ընդ որում՝

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:»:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
ՀՀ մշակույթի նախարարություն	«ԿՈՏԱՅՔՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան,
Կառավարական շենք N 2,	Բարեկամության 2
հեռ.՝ (011) 58-51-78	հեռ.՝ (0222) 25444, (096) 788008,
ՀՎՀՀ 02508054,	էլ. փոստ՝ abovyanihhg@gmail.com
հ/հ 900011012920	ՀՎՀՀ 03503627
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	հ/հ 163088121476
գործառնական վարչությունում	"Հայէկոնոմբանկ" ԲԲԸ,"Աբովյան" մասնաճյուղ
Աշխատակազմի ղեկավար՝	
_____ Ս. Մուրադյան	_____ Ա. Վարդանյան
(անվանակոչություն)	(անվանակոչություն)
Կ.Տ	

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«ԱԲՈՎՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Հասցե՝ ՀՀ, ք. Աբովյան, 2207,
ինտերնացիոնալ փ.1,թ.29-32 շին.
Հեռ.՝ +374222 20-596
Տեղեկատու՝ 86-86
Ֆաքս՝
էլ. փոստ.՝ bank@aeb.am
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
ABOVYAN BRANCH
Internacional str. 1,building nb.29-32, 2207 Abovyan,
Republic of Armenia
Tel.: +374222 20-596
Call Center: +3741 08000-8686
Fax:
E-mail.: bank@aeb.am
www.aeb.am

16308-115

ք. Աբովյան 02.08.2017թ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

N ԵՐ-08/17/0001

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ Ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Բենեֆիցիար) և <<ԿՈՏԱՅՔՆԱԽԱԳԻԾ>> Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքված N «ՀՀ ՄՆ ԲԸԱՇՁԲ-17/38-3» Պետության կարիքների համար կապիտալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով <<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> Բաց Բաժնետիրական Ընկերությունը (այսուհետ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 2.257.289 (երկու միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր ութսունինը/ ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) պահանջը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 02.08.2017թ-ից մինչև 01.12.2017թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով նշելով Պրինցիպալի կողմից Երաշխիքով ապահովված պարտավորությունների խախտումները և դրանք հիմնավորող փաստաթղթերը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում՝ երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ երաշխիքի գումարի 0.2 %-ի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին,

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Երաշխիքով Բենեֆիցիարի պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց Բանկի համաձայնության: Բանկի պատասխանատվությունը Բենեֆիցիարի առջև սահմանափակվում է Երաշխիքի գումարի չափով: Բենեֆիցիարի վճարման պահանջը Երաշխիքի գումարի մի մասով կատարելը նվազեցնում է Բանկի ստանձնած պարտավորությունը՝ կատարված մասի չափով: Մինչև Երաշխիքի գործողության ժամկետի ավարտը Երաշխիքի բնօրինակը Բանկին վերադարձնելը համարվում է Երաշխիքով Բենեֆիցիարի իրավունքների հրաժարում և դադարեցնում է Երաշխիքը::

Սույն երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող ետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխավորի կողմից:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«ԱԲՈՎՅԱՆ» ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ

Կառավարչի ժ/պ՝ Ա. Մելիքսեթյան

Սպասարկման բաժնի պետ՝ Զ. Հարությունյան